ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ.Յ.Դ. ՎԵՐԵՐԱՆՆԵՐՈՒ ՖՈՆՏԻ ԹԻՒ 2

ՀԱՅԿԱԿ ԿՈՍՈՅԵԱՆ

ՁՈՐՍ ԱՆՁՆԱԶՈՀ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ

ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶԻՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ

1949

ՏՊ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

ՊԷՅՐՈՒԹ

2286

Յիշատակի գրքեր մեր ամբողջական հավաքածուի
1-1-57 Սերոն Փարսամյան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Բ. Դ. ՎԵՐԱՆՆԵՐՈՒ ՖՈՆԴԻ

ՀԱՅԿԱԿ ԿՈՍՈՅԵԱՆ

ՉՈՐՍ ԱՆՁՆԱԶՈՀ ՊԱՏԱՆԻՆԵՐ

1949
ՏՊ. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՊԷՅՐՈՒԹ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Նոր սերունդի ազգային դաստիարակութեան համար կենսական է տալ դրուագներ հայ ազատագրական շարժումէն։

Մեր երիտասարդները միշտ կը փնտռեն երկեր, որոնք նուիրուած ըլլան հայ ժողովուրդի մղած հերոսական պայքարներուն։ Ընդհակառակը կը խորշին պահպանողական տարրի «մեռանք, կորանք» պատմութիւններէն։

Իրական դէպք մըն է, որ այս գրքոյկով կը ներկայացնէ ընկ. Հայկակ Կոսոյեան՝ ուսուցիչը «ՉՈՐՍ ԱՆՁՆԱԶՈՀ ՊԱՏԱՆԻՆԵՐ»ուն, գրի առնուած խոր յուզումով և գունագեղ ոճով մը։

Ուսուցիչ Կոսոյեան, այդ դէպքէն հաղիւ տասնամեակ մը ետք, դարձաւ վարիչ դէմքը Վան Քաղաքամիջի ապստամբութեան։ Ինչ կասկած, որ չորս անձնուէր հայորդիներու արիութիւնը տեղ մը գրաւած էր իրենց ուսուցչին հայդուկ դառնալուն մէջ։

«ՉՈՐՍ ԱՆՁՆԱԶՈՀ ՊԱՏԱՆԻՆԵՐ» գրքոյկը կարդալով, ընթերցողը իր մտքի և հոգիի տե-

առղութեամբ կը փոխադրուի պատմական Աղթամարը, հոն կը հանդիպի Դանիէլ վրդ. Զատոյեանին, Իշխանին, Վանի Սարգիսին և նահատակուած պատանի Յակոբին։

Հեղինակը ջերմապէս շնորհաւորելի է, որ այս գրքոյկով առիթ կ'ընծայէ մեր երիտասարդներուն անմար պահելու կրակը իրենց սրտին մէջ և պատրաստուելու նոր զոհողութիւններու ի փառս յաւիտենական հայրենիքին։

ԳԱԲՐԻԷԼ ԼԱՋԵԱՆ

ՁՈՐՍ ԱՆՁՆԱՁՈՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ

(Աղթամարայ դպրանոցի աշակերտական կեանքից)

Մտասլացք դէպի Ռշտունիք.— Աղթամար կըղզին ու վանքը.— Աղթամարայ թեմական դպրանոցը.— Ծաղկազարդի կիրակին Աղթամարում.— Ալեզարդ վանականը.— Ֆէդայական խումբի մուտքը կղզին.— Ծովապաշարումն ու կռուի երեք օրերը.— Աւագ Բը.— Աւագ Գը.— Աւագ Դը.— Խումբը հեռանում է կղզուց.— Թուրք զինուորների մուտքը դէպի Աղթամար.— Պատանի Յակոբի սպանութիւնը.— Հայր Պողոսի հարցաքննութիւնը եւ նրա պատասխանները.— Այց պատանի նահատակի շիրիմին.—

ՄՏԱՍԼԱՑՔ ԴԷՊԻ ՌՇՏՈՒՆԻՔ.—

Հայ Յեղափոխական շարժման ֆէդայական շրջանը այնքան հարուստ է անձնազոհութեան և հերոսութեան բազմաերանգ դրուագներով։ Նրան ոգի և շունչ տուող ազդակները բղխում են ժողովրդածին ինքնանուիրման ակունքներից, դրոշմ ունենալով գերազանցապէս մաքուր և անսակարկելի հայրենասէրի բիւրեղ գաղափարականութիւնը միայն։

Կեանքի վտանգը՝ մահուան ահը չքանում էր անհետ, երբ վայրկեանը պահանջում էր գործ կատարել։ Այդ սրբազան պահին պատրաստ էին ժողովուրդի ծոցից ծնած ու սնած հայդուկ ֆէտայիները, նոյնիսկ ծաղկափթիթ պատանիները, նետուելու վտանգի յորձանուտը՝ երգով հեգնելու մահը։ Հայրենի զոհա-

սեղանին ի սպաս ռուսման սեղանից պատանի կեանքերն անգամ յառաջ ընկան խլելու մրցանիշը յանուն ժողովուրդի ազատութեան ու Մայր Հայրենիքի փրկութեան սուրբ գործին:

Աղա՛ս հայրենիք, աղաս բոլոր տեսակի օտար տիրակալներից, ամեն տեսակի երկաթ-ոսկի շղթաներից սարկաբոյր:

Եւ ահա այն ինչ որ գրի կ'առնեմ այժմ, կատարուած Աղթամարի դպրանոցի չորս պատանիների կողմից (պատիւ՝ ամբողջ աշակերտութեան) ասկէ 42 տարիներ առաջ — ո՛չ վէպ է, ո՛չ յօրինուած պատկեր և ո՛չ էլ երեւակայական իրադրութիւն: Այլ իրապէս կատարուած Կենդանի Գործ, ժամանակի յեղափոխական դաստիարակութեամբ թեւաւորուած Սերունդի — Նոր Սերունդի մի անձնազոհութեան սքանչելի դրուագ միայն, որն արձանագրել պարտ կը համարեմ, իբրեւ ժամանակակից ականատեսի և մասամբ էլ մասնակից ներկայի:

Քառասուներկու տարի յետոյ, իբրեւ վտարանդի ի հայրենեաց, մտաթռիչք ալացքով կը թեւածեմ ամայացած Վասպուրական, իմ այն օրերի անմատոյց ու սիգապանծ Ռշտունեաց աշխարհը՝ փռուած առ եզերք Վանայ ծովակին, մինչեւ ձորձորներն ու ծմակներն եզերող լեռնաշղթային, որոց վերեւ խոլական թափով թափառում են ոգիները իշխանի, Ռաֆայէլի և ուրիշ բազմաթիւ հայդուկների...

Ռշտունի՛ք... օրօրան հին և նոր հերոսների:

Առինքնող հող ու ջուր, ադամանդակերտ յիշատակարաններով երկարաձիգ մինչեւ դարերի աղջամուղջը: Դո՛ւ, ինչպէս փարոս լուսարձակ, իմաստաւորում ես մեր ուղին անցեալից երկարող մինչեւ Ապագան, և՛ այսօր և՛ վաղը:

Ռշտունի՞ք... բեկոր Հայրենեաց, որբ ու զարնուած։

Ափսո՜ս, բիւր ափսոս որ այսօր Աճիւն ու Մոխիր է սփռուած լեռներիդ ամեհի, իսկ կածաններդ անապատի իժերն են սողոսկում։ Սակայն Մեր ու Վաղուայ գալիք սերունդների հոգու մէջ կ'առկայծիս, իբրեւ Հայ իղձերու կապոյտ փիւնիկ. ու վաղը պիտի յառնես մոխիրներէդ նո՜ր, Ազատ Հայրենի Այգաբացով...

ԱՂԹԱՄԱՐ ԿՂԶԻՆ ՈՒ ՎԱՆՔԸ.—

Բզնունեաց ծիծղուն ծովու շուշան մանեակն է Աղթամար կղզեակը, Ռշտունեաց լեռնաշխարհի ամրոցն անմատոյց, շրջափակուած ջրային ջինջ կապոյտ պարիսպով։

Աղթամա՜ր, Արարչի աչքերից վայր ընկած մի կաթիլ արցունք, փոխարկուած ժայռի և ջրի։ Ցարաժամ ծփանք ու խաղ, ալիք ու ժայռ գրկախառնուում ինչպէս յաւերժահարսեր, սակայն երբե՛ք չեն միախառնուում, լուծուում փրփրուն կոհակների մէջ։

Կղզու կրծքին կաթած է երկնուց աստղերէն վայր ընկած Սուրբ Խաչ Վանքը Արծրունի։ Նրա գմբէթը վեր կը սլանայ իբրեւ բաչ Հայ Ճարտարապետութեան, յատակագծով Գագիկաշէն, կառոյցով գեղակերտ։ Նուռ ու ողկոյզ որմնանկարներով բարձրաքանդակ, ակնազարդ գունեղ։

Նրա մէն մի պատկերից Աստուածաշունչն է խօսում։ Մարգարէները, Ցիսուսն ու Առաքեալները մուրճ բրիչով քանդակուած, ճարտարապետական յղացքով՝ հայատիպար խորհուրդով մեզ կը խօսին։

Մէկ հաղարամեակից աւելի արծուի խոյանքով գալիս է կանգուն և դարերու ընդմէջէն նա եղած է ներշնչարան քրիստոնէական բագինի վեհութեամբ, պատգամելու մեզ հայ աշխարհի Ցարութիւնը։

Նա ճշմարիտ պաշտամունքի ու հիացման յուշարձան է դարձել մեր դրկից քիւրտի համար, որի ժողովրդական բանահիւսութիւնը ունի սերունդից սերունդ փոխանցուած հեռեւեալ պատկերաւոր ասացուածքը.

Դէրէ Աղթամարէ,
Տրչըտ հատա
Ախար զամանէ։

(Վանքն Աղթամարայ կը տեսէ մինչեւ աշխարհի վախճան)։

Քիւրտ բաղդակից ժողովուրդը գուսաններգեր է Աղթամար կղզին սիրահար զոյգի երանգով՝ Լաւկէ Հրմանի (Հայ պատանի) երգախառն տաղերգութեամբ, որի մէկ տարբերակն է Ց. Թումանեանի մշակած «Աղթամարը»։

Քիւրտ հովիւ խաչնարած ցեղը խոր տպաւորումով իւր բանահիւսական ստեղծագործութեան մէջ ակնածու յարգանք և գնահատանք ցուցադրած է երկրի ընիկ տէր Հայի բարձր մշակութային կոթող՝ պատմական դարերի կեանք զգեցած վանքին ու կղզիին։ Մեր ժողովուրդի քրիստոնէաշունչ ազգային վեհութիւնն ու գերադասութիւնը տիրականօրէն ազդել է քիւրտի ներաշխարհի վրայ, անկախ նրա ցեղային և կրօնական ներհակ ըմբռնումներից։

Այսպէս ծիծաղախիտ ծովու փրփրերախ ալիքներու դաշնակաւոր մեղեդիներուն մէջ օրօրուն Հայրենի Աղթամար կղզին ու վանքը պիտի մնան անխորտակ գաղափարի ներշնչարաններ... և՛ այժմ և՛ վաղը։

Աղթամա՞ր... Դաղափար ու միտք դարերի մի-ջից խօսող։ Հայ ոգին բիւրեղացած, մշտավառ ատ-րուշան ծովու ծփանքներով անմար։

Թշնամու տրորող կրունկի տակ հեծող իմ հայրե-նի ժայռ ու կոհակ, դէպի քեզ է սլա՞նում այսօր իմ էութիւնը տարաշխարհից։

Անո՞ւշ Աղթամար, թովի՞չ կղզեակ ու վանք...

Դէպի քեզ թող ձգտի նոր-սերունդը, յար և անմար ոգով զրահաւոր, մի օր քեզ նուաճած գտնելու իր թեւերով, բազուկով...

ԱՂԹԱՄԱՐԱՑ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԸ

1906—7 ուսումն. տարեշրջանին պաշտօնավարում էի թեմի նորաբաց Միջնակարգ Դպրանոցում, տեսչի օգնականի պարտականութեամբ։ Այդ տարին Դպրա-նոցը գտնուում էր Աղթամար կղզու մէջ, տեղաւորուած վանքի հին ժառանգաւորաց շէնքերում, որոնք ծա-ռայում էին սանների համար իբրեւ ննջարան և ճա-շարան։ Իսկ դասաւանդման համար օգտագործում էին հանգց. Խաչատուր Կաթողիկոսի շինել տուած վեհարանի երկյարկանի շէնքի հինգ լուսաւոր սեն-եակները, ստեղծելով դպրոցական արդիական ան-հրաժեշտ յարմարութիւնները, որոնցից զուրկ էր վանքի հին ժառանգաւորաց։

1907—8 երկրորդ ուսումն. շրջանին, դպրանոցը տեղափոխուեցաւ կղզուց դուրս, Ախավանքը, որ գըտ-նըւում է Աղթամարայ կղզու հանդիպակաց ցամաքա-եզրին։ Դուրսի տանը կամ Ախավանքում գտնուում էր Կաթողիկոսարանի յատուկ յարկաբաժինը ուր ապրում էր Կաթող. Տեղապահը, միաբան երկու վարդապետ-

ների հետ։ Այստեղից ղեկավարում էին թեմի ազգ. հոգեւոր իշխանութեան թէ վարչական, թէ կրօնական գործերը ըստ Ազգ. Սահմանադրութեան կանոնադրութեան։

Ախավանքում գտնուում էին վանքի ընդարձակ ագարակը, տնտեսատունը իւր բոլոր բաժանմունքներով. — հողագործական, կաթնատնտեսական, լծկան ու կաթնատու կենդանիների ու ոչխարների հօտերով։ Զոյգ ջրաղացները, մէկ նորատունկ պտղատու մեծ այգի, ուռուսու այգի (*) անունով ծանօթ։

Ախավանքը ծովափին լինելով ունի հրաշալի և օդասուն դիրք, տեղ-տեղ ծովափից 10—25 մէթր միայն հեռու։

Նա թաղուած է իր շրջապատի ընդարձակ և դարեւոր ընկուզենիների, զանազան ծառ ծառատանների պուրակների մէջ, միշտ կանաչ, միշտ հովասուն։

Ունի մշտահոս առատ առու-առուակներ, որոնց ակունքը Եղիրով լեռնաշղթայի ստինքներն են, անուշահամ, սառնորակ։ Օր ու գիշեր ուռոգելով վանքի հանդն ու արտօրայքը, այգին ու բանջարանոցը, աշխատացնելով զոյգ ջրաղացները, խոխոջելով կը թափին ծովը Աղթամարայ։

Գարնան և ամրան ամիսներին Ախավանքը իրական դրախտի մի պատառիկ է փռուած մռնչող ու

---

*) Արեւելեան պատերազմին 1878 թ. մի ռուս զինուոր գերի ընկնելով կը յաջողի նողոպրիլ ու ապաստանիլ Աղթամար։ Այստեղ կը կապուի վանքի հետ. էլ չի վերադառնար իր հայրենիքը։ Այս ռուսը անվարձ ինքն իրեն կը նուիրէ վանքին։ Տնկում եւ մշակում է մի ընդարձակ այգի, ծովի եզերքին, բարձր քարափին։ Այս այգին իր անունով կոչւում է ուռուսի այգի։

մնչող ծովափին, հազար լեզու թռչնոց ճռուողիւնով համերգուած...

Ահա այս ծովահայեաց հովասուն վայրում, 1905 թ. հիմնադրուեցաւ, Լեռնապարի Դաշնակցութեան անդրանիկ ղեկավար՝ Ազատուրեան Զինուոր*), Իշխանի ցուցմունքով թեմի դպրոցական երկյարկանի շէնքը, որն իր ժամանակին արժէքաւոր նշանակութիւն ունեցաւ թեմի կրթա-մշակութային գործին, նպաստելով ժողովրդական զարթօնքին և յեղափոխական սերունդի թէ դաստիարակչական, թէ՝ մարտական գործին։

Ուսման տաճարի երկյարկանի շէնքը բաղկացած էր 16 մեծ, լուսաւոր և օդասուն սենեակներից, 8-ը առաջին յարկը, միւս 8-ը վերի յարկաբաժինը, իրենց մէջ ունենալով երկու ընդարձակ և լայն սրահներ, որոնք ի հարկին օգտագործուում էին աշակերտական ներկայացումների համար, ստեղծելով բեմական յարմարութիւններ։

Թատերական ներկայացումները Ռշտունիքում առաջինը պատկանում է Աղթամարի նոր դպրանոցին, որ Դաշնակցութեան շինարար ջանքերով, գալիս էր փոխարինելու վանքին հին ժառանգաւորացին, սրանից մէկ քառասնամեակ առաջ։

Նոր Դպրանոցը գիշերօթիկ էր. աշակերտները հաւաքել էին թեմին պատկանող բոլոր գլխաւոր գաւառներից, Շատախ, Մոկս, Հայոց-Ձոր, Գաւաշ, Կառկառ, Խիզան, Սպարկերտ, Ողմ, Մարմանք և այլն։ Առանձին ընտրութեամբ առնուում էին առողջ և

*) Լեռնապարեան իր գործունեութեան մէջ Իշխանը իւր բոլոր գրութիւնները կ'ստորագրէր այդ կոչումով։

ԻՇԽԱՆ (1882—1915) Լեռնապարի հայդուկ դեկավարը
(Նկարուած 24 տարեկանին Վանի մէջ)

ընդունակ նկատուած մանուկ պատանիները։ Գիշերօթիկների թիւը 60—70ի մէջ էր։ Հաղիւ 10—12 հոգի թոշակառուներ. մեծ մասը սովորում էր վանքի հաշուոյն։ Սանների բոլոր պէտքերը, գրական, սնունդը, հագուստը, պաշտօնէութեան վճարումները կը հոգացուէին Աղթամարի հասոյթներով ու յատկապէս Փութկու Ս. Գէորգ վանքի ժողովարարութիւնից գոյացած դրամական եկամուտից. շնորհիւ Իշխանի ձեռք առած ազդու միջոցներին, տարեկան 250 օսմ. հնչուն ոսկիի մի գումար տալիս էին Փութկու վանքի ժողովարարները։ Նիւթապէս ապահովուած դպրանոցի նպատակն էր Միջնակարգի լրիւ աստիճանին լրացնելով, իր թեմի գաւառներին հասցնել կրթական հասարակական գործիչներ, առաջին առթիւ։ Ապա ունենալ գիւղատնտեսական բաժինները, գործնական-օրէն վարժեցնել աշակերտներին արդիական հողամշակման, կաթնատնտեսութեան ու մեղուապահութեան ճիւղերի հետ։

Աղթամարայ հին ժառանգաւորաց դպրոցի այս ձեւափոխումը կատարուեց Դաշնակցութեան ջանքերի շնորհիւ 1905—6 ուսումն. տարուց՝ առաջին տարին կղզու մէջ և յաջորդ 1906—7 տարեշրջանից սկսած դրսի Տան՝ Սխալանքի նորակառոյց շէնքի մէջ։

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԿԻՐԱԿԻՆ ԱՂԹԱՄԱՐՈՒՄ

1907 թուին Մարտ 29 (Նոր տոմար) Ծաղկազարդի կիրակին, ազատ եւ գաւառացի պատանիների համար գրաւիչ օր լինելով, դպրանոցի վերի կարգի պատանիների փափաքով ուզեցինք լինել գարնան առաջին կանաչութիւնը հագած գրաւիչ կղզու վրայ,

զբօսնել պճնած ցամաքամասում, վերապրել մէկ տարի առաջ այդտեղ անցուցած դպրոցական կեանքի մեր Երէկը։

Ծաղկազարդի նախընթաց շաբաթ երեկոյ նստեցինք փոքր մակոյկի մէջ։ Կարճ բոպէներից յետոյ պատանի թիավարների, վարժ ու համաչափ շարժումով, դուրս եկանք բաց ծովը։ Մեր մակոյկը կենսուրախ խինդ ու ծիծաղով լեռնաւորած, օրօր-չորոր կը սուրար մուգ կապոյտ ալիքների վրայ, դանդաղասլաց թռչունի արագութեամբ, դէպի աղջամուղջի գիրկը նիրհող կղզին։

Յաջորդ օրուայ մեր ծրագիրն էր, մէկ անգամ էլ շրջիլ ամբողջ կղզին, բարձրանալ Բաֆֆու ժայռի կատարը, հոն վայելել մեր թեթեւ նախաճաշը, դիտելու և արբենալու զմայլելի գարնան առաջին հով ու զովի մէջ, բնութեան չնաշխարհիկ, կախարդական համայնապատկերը Վասպուրական աշխարհի։ Սիփանից Նէմրութ, Գրգուռ, Եղիրովի ձիւնապատ լեռնագագաթները ամպածրար, Արտօս գագաթը ծովու հայելու մէջ նայող հսկայի պէս. Արեւելքում մշուշապատ լեռնահովիտն Հայոց-Զորի, ապա Շամիրամաբերդը ու դաշտը Վանայ, Արծուաբոյն Վարագը... Բոլորը, մէկ քանզմէկ նկարչական, ծովու ծփանքների ու ալեաց վէտվէտումների մէջ՝ կարօտ վրձինի ու ներկի կենդանագրութեան։

Յետ այնու ծովային զբօսանք կատարել մօտակայ Առ Տէր կղզեակը, որ տարուայ ապրիլ և մայիս ամիսներին իւրայատուկ փարթամ բուսականութեամբ, Սիմոնակ Բանջարի ու Պողիկի աճեցուն խտութեամբ հազար երամ վայրի թռչնոց համար թուխսի և ձագահանման պատսպարան է։ Այս մենաւոր կղզեակը թռչնարնակ, իր ջինջ եթերակամարով, արտասուքից

աւելի յատակ ծովու ջրերով, ունի վայրի մի առինքնող նկարչութիւն։ Այնտեղ ծովու ալիքները անդադար կը ծեծեն, կը չոյեն ու կը համբուրեն կղզու ժեռ ափերը, բայց քնաւին չեն պղտորիր, չեն աղմոտիր, որքան էլ զայրագին լինին ալիքների մռունչները։

Այո՛, մէկ անգամ էլ, (և այժմ խորհուում եմ վերջինը եղաւ այդ) պատանի աշակերտներուս հետ զբուցել ու կենդանի տպաւորութեամբ արձանագրել նրանց հոգու և սրտի ներաշխարհում՝ հանճարեղ Աղօթաւոր բանաստեղծի, Գրիգոր Նարեկացու մխիթար ապրումները, տենչերն ու գերերկնային մտասլացումները «Վերատին յաւելուածի» սարսուռով օծուն... «Ծով ծիծաղախիտ ծաւալանայրի» քնարերգուին։

Իմ այս մտախոհների մէջ ցանցուած, մեր պատանի մակոյկավարները թիերի ճողփիւնով յառաջ կը թռցնէին նաւակը խաղաղ ալիքների ուսերի վրայով։ Պատանի աշակերտները լիակուրծք երգում էին ընաշխարհի ժողովրդական, ազգային երգեր,— «Երբ ալեկոծ», «Զայն տուր ով ծովակ», «Մենք անկեղծ դինուորներ ենք», «Նաւակին մէջ հայ պատանին»...

Մեր չուրջը թանձր մթութիւն էր, իսկ երկինքն էլ աստղազարդ։

Երկու ժամ տեւողութիւնից յետոյ մենք մեզ գտանք Աղթամար կղզու փոքր նաւահանգիստը, ուր եկել էին կղզեբնակ տիրացու մոնթերն ու ծառայողները։ Նրանք լսել էին երգի ձայները, ծովու բացերից հասած կղզու անդորրութեան մէջ ապրող բնակիչներին։

Այդ տարին կղզու բնակչութիւնը տաս հոգուց աւելի չէր։ Դպրոցի տեղափոխութիւնից վերջ, այնտեղ ապրում էին երկու վանականներ՝ Հայր Պօղոս վրդ.

և Ներսէս վարդապետ, երկու ծեր տնտեսուհիներ, միւսները տիրացու սպասաւորներ։

Բոլորս երգ ու ծիծաղով մակոյկից դուրս նետուեցինք ափը, աշակերտներից երկուքը նաւակը գըրկելով դրին ափին, ապա նաւահանգստի զառիթափից ուրախ ձայներով առաջացանք միաբանական երկյարկանի շէնքի պատշգամը։ Այնտեղ մեզ բարեւեց Հայր Պօղոսը, իրեն յատուկ զուարթ խօսքերով։

ԱՂԹԱՄԱՐԻ ԱԼԵՔԱՐԴ ՎԱՆԱԿԱՆԸ

Աղթամարայ միաբանութեան ամենից տարէց այս վանականը, եօթանասունից ոչ պակաս, մի վերին աստիճանի բարի, աղօթասէր, խաղաղ ու խաղարպր անձ էր, զուարթախօս ու կատակասէր։ Հասակով բարձր, ճեփ-ճերմկած մազերով, սպիտակափառ ճաճուն մօրուքով, որ դեռ նոր սկսած էր նօսրանալ։ Սուր և ուժեղ տեսողութիւն ունէր, ակնոց չէր գործածում։ Պատկառազդու արտաքինի հետ միաժամանակ թեւթեւ և արագաշարժ էր։ Նա վերջին շառաւիղն էր վանական հին սերունդի և նրա էլ վերջակէտը եղաւ։ Նրա սիրած գրքերն էին մի հնամաշ աստուածաշունչ, շուշփայով փաթթած, Նարեկ աղօթագիրքը ու պատմագիրներից Թովմա Արծրունի և Խորենացի։ Նա հայրենասէր էր, հաւատարիմ իր եկեղեցուն ու ազգին։ Այս երկուսից դուրս ուրիշ նւիրական բան չտեսայ նրա մօտ։

Կեանք ապրած ու տեսած մարդ էր, քսաներեքինգ տարիներից ընդունել էր կուսակրօն վարդապետի կոչումը, վարել թեմի մի քանի վանքերի վանահօր պաշտօններ։ Հինգ մատի նման ճանաչում էր կաթո-

ղիկոսական թեմը, գիւղերը, վանքերը իրենց կալուածներով. հայ ու քիւրտ ժողովուրդներին, իրենց կենցաղային հարեւանական պայմաններով, ծանօթ քիւրտ ցեղերին ու բէկերին։ Վարժ էր քիւրտ խօսակցական լեզուին։

Նա մասնակից և դերակատարներից էր եղել Աղթամարի վանական ներքին պայքարներին, երբ Խաչատուր Շիրոյեան եպիսկոպոսը դաւադրօրէն կաթողիկոս կ՚օծուի, այն ժամանակ երբոր կ՚ըսպանուի Տէր Պետրոս-Բիւլբիւլ կաթողիկոսը Փշաւանց գիւղում Գաւաշի ցեղապետ Կուլիխան պէկի ձեռքով 1864 թ.։

1906 թ. երբ զինքը առաջին անգամ տեսայ, նա իր յառաջացած տարիքի հետեւանքով տաս տարուց աւելի էր որ տպրում էր կղզում, որտեղից չէր սիրում ոտք դուրս ձգել։ Կղզու մէջ իմ բնակած սենեակը կից էր Հայր Պօղոսի ննջասենեակ առանձնարանին։ Ստեղծւում էին առիթներ, երբ նա պատմում էր իր ապրած օրերի զանազան դէպքեր, պատահարներ եւայլն։

Հայր Պօղոսը, իր տարիքին յատուկ կշռադատող մարդու տրամաբանութեամբ բարձր էր գնահատում խմորուող յեղափ. աշխատանքները։ Կեղեքուող, հարըստահարուող և յանիրաւի հալածուող հայ ժողովուրդի համար բարերար էր համարում յեղափոխական աշխատանքներին փարած հայորդիների ջանքերը։ Արդար հիացմունքով էր խօսում Խրիմեանի մասին, նրան համարում Աղթամարցի, Աղթամարում վարդ. ձեռնադրուած լինելով։ Խրիմեանից անբաժան էր Բաֆֆին, որի մասին պատմելիս թմբկահարում էր վանական վերարկուի մէջ պահուած ձեռքը, ուղղում ցուցամատը դէպի կղզու հիւսիս բարձրացող քարաժայռը — Բաֆֆու քար —, որ եղել է ներշնչարան վիպասան-բանաստեղծի համար։

— Է՛յ ջահէլ ջիվաններ, որ ուխտի կուգաք մեր կղզին, մեր վանքը, առանց Բաֆֆու քարի գլուխը բարձրանալու մի՛ վերադառնաք ձեր տունները, ասում էր այս ծերուկ հոգեւորականը ազդող շեշտով։

Հայր Պողոսը Հայդուկ Իշխանին կոչում էր «թըվընքով (հրացանով) կաթողիկոս Մեծի Տանն Աղթամարայ», որ եկել է փոխարինելու կրօնապետ կաթողիկոսին՝ շրջապատող շնագայլերից զէնքով պաշտպանելու հօտը։

Նա սաւր հիւմօրով պատմում էր իր առաջին ծանօթութիւնը մօրուքաւոր իշխանի հետ, որ դեռ շատ ջահէլ էր, դեղնակտուց։ Առանձին զուարթութիւն կը ծաւալէր Հայր Պողոսի աստուածշնչական դէմքին, երբ պատմում էր թէ ինչպէս հազիւ մի քանի ամիս ոտք դրած էր լեռնապարը ու այցի եկած կղզին. մի անգամ իր մօտ կը կանչէ Հայր Պողոսին ու կը հասկացնէ նրան, որ մի գումար նուիրաբերէ կաղմակերպութեան գործին։

— Մեր պ. Իշխանը, ասում էր Հայր Պողոսը, էնպէս էր համոզուած, թէ Աղթամարայ մեր վարդապետները էջմիածնական միաբանների նման գումարներ, դեղին օսկի ունին դիզած։ Մի անգամ, երբ թէյ էինք խմում միասին, ինձ ևս ասաց — Հա՛յր Պողոս, քեզ նշանակել եմ 30 ոսկի, որ պիտի վճարես, հա՛... չըլնի ականջի ետեւ ձգես։

— Է՛, եթէ չվճարեմ ի՞նչ պիտի լինի, էլ չասի թէ չունիմ։

— Ի՛նչ պիտի լինի, պիտի տաս, թէ չէ վերջը լաւ չի լինիր։

— Ասի շատ բարի, միւս գալստեանը 30 ոսկին հազըր (պատրաստ) կըլինի։

Մէկ քանի ժամանակ յետոյ, երբ պր. Իշխանը

իր խումբով կղզին եկաւ, վերցրի ունեցածս հոգեպահուոր 3 ոսկի և 10 մէջիտ փող, տարայ քիսայով (քսակ) դրի սեղանին վրայ։ Ահա իմ ունեցածս, պր. Իշխան, Հայր Պօղոսի փարէն էսա, բանիդ կըգայ էսա, բանիդ չիգայ էսա։

Իշխանը ժպտալով վերցրեց քսակը, առանց նայելու ինձ յանձնեց ասելով.— Հա՛յր Պօղոս, ես քեզ փորձեցի, մենք պէտք չունինք։ Հիմա էդ մաշած վերարկուն դէն ձգիր, մէկ նոր ֆարաճա կարել կուտամ Շատախից բերածս չալերից, կը հագնիս և էջմիածնական հայր սուրբների պէս օրօր-չորոր ման կուգաս...

Ահա այս զուարճախօս անցուդարձը Պօղոս հայր սուրբը կը պատմէր զուարթութեամբ, բոլորը խտացրած յօրինել էր մի սրախօս քառեակ, իբրեւ թէ Իշխանը ասած է յանգաւոր.

Հա՛յր Պօղոս
Եկուր հոս
Տուր երեսուն Օս (Օսմ. ոսկի)
Եթէ ոչ կընկնիս փոս։

Այժմ քառասուն երեք տարիներ անց, խոր յարգանքով կը մտաբերեմ բարետիպ Պօղոս Հայր սուրբին. մտապատկերիս մէջ այժմ վերակենդանացած գծւում է նրա պատկառելի դէմքը, հի՜ն հի՜ն հաւատն ու բարքն մարմնաւորող հայ վանական տիպը։

Նա Աղթամարայ վանական միաբանութեան վերջին շառաւիղը եղաւ. միաժամանակ և վերջակէտը. երբ 1915 թ. վերջնականապէս ամայացաւ կղզին իր դարերի ազգ. հոգեւոր կեանքից և ուր հաւատարիմ իր ուխտին, սրախողխող թշնամու սուրից իր մահը գտաւ, ինչպէս նահատակ՝ հայրենի սուրբ հողի վրայ։

Պօղոս Հայր սուրբը, ամենայն օր, արշալոյսին

վաղ, արտորանօք կ'ըշտապէր Արծրունակառոյց Տաճարն Աղթամարայ, կը զօղանջէին զանգակատան զանգակները (*) քաղցրալուր մելոդիայով, մինչ մեր Հայր սուրբը հաւատքով խունկ ու մոմով կ'աղօթէր համայն աշխարհի խաղաղութեան համար, ամբողջ մարդկութեան սիրոյ և եղբայրութեան համար, ապա նաեւ իւր Հօտի երջանկութեան, նրա փրկարար ազատութեանը իրենց ջահէլ կեանքերը նուիրաբերող զինուորեալ մանկանց համար...

Ահա Հայր Պօղոսի հիւրընկալ ցուցմունքով մենք տեղաւորուեցանք երկու սենեակների մէջ։ Մեզ տուին մի սովորական պարզ ընթրիք՝ հաց, պանիր ու մածուն, որից յետոյ պտոյտի ելանք դէպի կարմիր եկեղեցու ծայրի հարթավայրը, կղզու արեւելակողմը ծովի մակերեսից մօտ 30 մէթր բարձր։

ՁԷԴԱՑԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ՄՈՒՏՔԸ ԿՂԶԻՆ

Կէս գիշեր անց էր, լուսաբացի մօտ, կղզու ըսպասաւորները հեռուից լսուող ձայնի եղանակից արթընալով յայտնեցին թէ նաւ է մօտենում կղզուն։ Ամենայն հաւանականութեամբ եկողները յեղափոխա-

*) Այս զանգակներից մեկը վերջին անգամ տեսայ, (1915 թ. Վասպ. գաղթից յետոյ իբրեւ կողոպուտ հասել էր Ատրպատական) Թաւրիզ քաղաքի շաբաթապահների դպրոցի բակում կախուած։ Աստիճանների միսիոնը գրել էր եւ գործածում էին իրենց դպրոցի համար։ Զանգի վրայ կար Աղթամարի վանքի սեփականութիւն հաստատող ձուլածոյ, բարձրաքանդակ գրութիւն հայ տառերով։ Ցեռոյ ի՞նչ եղաւ՝ ինձ յայտնի չէ։

Պանները են, դատելով երգի՝ ձայներից և դիշերուայ այդ պահից։

Բոլորս վեր ելանք, հագնուեցինք ու իջանք նաւահանգիստ, ուր Հայր Պօղոսը աչխոյժ աշխոյժ կեցած էր ջրի ափին։ Նա եւս ասաց որ եկողները մեր տղաներն են անպատճառ։ Ծովի այդ կողմում, Թամար Թաղուհու կէս ջրամոյն կղզեակի մօտով, մթութեան մէջ ուրուագծուեց առագաստը պարզած մի նաւ, որ դանդաղօրէն իջեցնելով առագաստը հասաւ նաւահանգստի բերան։ Նաւահանգստի քարերի վրայ դուրս ցատկեցին զինուած մարդիկ, արագ և ճարպիկ շարժումով։ Նաւը կարգադրութիւն ստացաւ իսկոյն յետ վերադառնալ։ Շուտով յայտնի եղաւ որ Սարգիս Բարսեղեանն (*) էր (Յեղափոխական անունով Շամիլ) իր խմբի հետ եկողը, բոլորը 7 հոգի։ Մեր պատանի աշակերտները, ծանօթ բոլորի հետ, միախառնուեցին խմբին. վերցնելով որոշ ծանրութիւններ շտապեցինք միաբանութեան ազատ սենեակները, ուր տեղաւորուեցին։ Պարզ եղաւ, որ այդ օրերին լուրջ հետապնդման առարկայ էր Սարգիսն իր

*) 1906 թ. Աբնան վերջը, երբ Իշխանը իբրեւ պատգամաւոր մեկնեց մասնակցելու 7-րդ Ընդհ. Ժողովին, նրա բացակայութեան միջոցին Սարգիս Բարսեղեանը ստանձնեց լեռնաշխարհի կազմակերպութեան ղեկավարութիւնը։ Ու այդ պատրաստուած, մարմնով փափկակազմ, բարձր կրթութեամբ մտաւորական ոյժը, պէտք էր տեսնել թէ ինչպէս ցանում էր Ցեհայական կեանքի ծանր բեռը, դաժան զրկանքները, հեռիոտն շրջելով Ռուսուցից. Մոկսի, Շատախի անդնդախոր ձորերը, կածանները ու առապարները։ Առ ոչինչ համարելով լեռնապարի ցուրտն ու ձմեռը, բուքն ու սառնամանիքը։

Վասնայ Սարգիսը կամ Սարգիս Բարսեղեան (Շամիլ)

խումբով և կատարած աշխատանքներով, որ կատարում էր նաեւ քիւրտ ժողովուրդի վստահելի խաւերում։ Նա իր խումբով այդ օրերին շրջում էր Մոկսում և Շատախում, վերադարձին Գաւաշում խմբի դինուորներից մի մասին ուղարկում Կարկառի շրջան, իր հետ պահելով վեց հոգի, որոշում է գաղտնի մըտնել Աղթամար կղզին, այդ կերպ թէ իր հետքը կորսընցնելու և թէ ապահով վայր հանգստանալու համար, մի առժամանակ։

Վանքի սպասաւորները տաք ջուր պատրաստեցին, բոլորս նստեցինք թէյի, միայն չկար Հայր Պօղոսը. սա սովորութիւն ունէր, երբ խումբը գալիս էր

կղզին, ինքը յօժարակամ ստանձնում էր հսկողութիւնը, շրջում կղզու ափերը, ասելով. — Տղանե՛ր դուք բէգարած կը լինէք, հանգստացէք ապահով, մենք կը կատարենք պահակութիւնը։ Արդարեւ այդ արթուն հոգեւորականը՝ ամենաքաղցր պարտականութեան մէջ կ՚ըզգար իրեն, կատարելով փորձ եւ արթուն հսկողութիւն ամեն անգամ, երբ ֆէդայական խումբը կղզին կուգար։

Խումբի այս անսպասելի այցելութիւնը իմ աշակերտների համար անակնկալ էր. մէկ տարուց աւելի էր որ նրանք առիթ չէին ունենար զինուած խմբի ներկայութիւնը վայելել, շրջագայիլ, զրուցել ծանօթ հայդուկների հետ։ Ծանօթանալ զէնքի վարժութեան և մաքրելու, դասաւորելու աշխատանքին։ Մեր պատանիները միաձուլուած էին նրանց հետ, կարծես մի երազանք ունէին, դպրոցի ընթացքը աւարտելուց յետոյ, զինուորագրուել ֆէտայական գործօն աշխատանքներին։ Ռումբ, փամփուշտ, հրացան ուսած նըւիրուել ժողովրդի և հայրենիքի ազատագրութեան սուրբ գործին։

Ծաղկաձորդի այդ առաւօտը ազատ ու համարձակ մեր պատանիները շրջագայում, զրուցում ու երգում էին խմբի հայդուկների հետ։ Միայն Սարգիսը զբաղուած էր նամակագրութեամբ, որի աւարտումից յետոյ փակեց մի երկու նամակածրար, կընքեց ու հասցէագրեց Շամի Կ. Կոմիտէին։

— Դէ՛, տղերք, շուտ նաւակով հասէք Խորգոմ, այնտեղից մեր ուղարկող Պետրոսից ստացէք Վանից եկած կապոցները, նամակները և արագ դարձէք յետ։

Սարգսի այս խօսքի վրայ վանքի սպասաւոր Ներսէսը, որ վարպետ և հմուտ էր նաւելու գործին, իր հետ վերցնելով մեր աշակերտներից 4 հոգու, ինքնա-

ջահանգիստը: Մտան մեր փոքրիկ մակոյկը, կենտրոնական ժպտուն Թիավարեցին դէպի Հայոց-Ձորի Խորգոմ գիւղի ուղղութիւնը, կղզու դէմ յանդիման արեւելք։ Մենք մնացողներս Կարմիր եկեղեցու հարթութեան վրայ կեցած, բարի՛ ճանապարհ, շուտ վերադարձէք կ'աղաղակէինք։ Մակոյկը կարճ միջոցից յետոյ դարձաւ մի փոքր կէտ, միայն շողուն փայլին էին տալիս ջրից վեր բարձրացող թիերը՝ մեր տեսողութեան։

Վանի և լեռնապարի միջև ստեղծուած էր սուրհանդակային կապի իւրայատուկ մի գիծ այսպէս: Ցեղափոխական նամակներ, գրականութիւն (թերթեր և գիրք), նաեւ զինական միջոցներ, նայելով իրենց ըստիպողականութեան, արագ կամ շտապ, ճամբայ կը հանուին յատուկ թղթատար սուրհանդակների միջոցաւ։ Այգեստանից, Բերդակ, Կինդանանց, Արտամետ գիւղերով ապա Խորգոմ, ուր հին գործիչ, Ուրացող Պետրոս անունով, կ'ընդունէր առաքումները, կը պահէր, մինչեւ Սղթամար կղզուց (որի ծածկանունն էր Ս. Հեղինէ) հասնէր նաւակ (ծածկանունն Աղաւնի) աղաւնին և տեղափոխէր կղզին։ Եւ ընդհակառակն կը կատարուէր կղզուց նոյն գծով Այգեստան։ Ջպատահեցաւ ո՛չ մի դէպք որ վտանգուէր յեղափոխական այս գիծը իր փոխադրական երթեւեկի միջոցին։ Ցիշուած գիւղերի մէջ կուսակցական կազմը պարտաւոր էր եկած ծրարը կամ նամակը անմիջապէս ճամբու հանել միւս գիւղը, առանց յապաղումի։

Կէսօրից յետոյ վերադարձաւ մեր նաւակ-Աղաւնին բերելով իր հետ ղրկուած թերթերի կապոցներ և նամակածրարներ, որոնք յանձնուեցան Մարգսին։ Ամատութեամբ ստացւում էին Թիֆլիսի «Ցառաջ» կամ «Ալիք» օրաթերթերը, նաեւ լոյս տեսնող հատորներ ու պրոշիւրներ։

Այսպէս մենք այդ օրը չունեցանք մեր նպատակադրած զբօսանք պտոյտը։ Մայրամուտը մօտ լինելով պատրաստուեցինք թողուլ կղզին և լուսով հասնիլ Սխալանքը, մեր դպրոցական կայանը:

Սարդիսը մի երկտողով, յանձնարարում էր Դանիէլ վարդ.ին նաւակը յետ ճամբել պարէնով միասին։

Երբ հասանք դրսի առուն, արեւը մայր մտած էր, աշակերտներին պատուիրուած էր կղզու հիւրերի մասին լուռ լինել և պահել գաղտնապահութիւն իրենց ընկերակիցներից։ Ծովափ դուրս գալով աշակերտները գրկելով նաւակը քաշեցին ու դրին աւազի վրայ, ինչպէս սովորութիւն էր։

Դանիէլ Հայր սուրբին տուի տոմսակը, և յայտնեցի բերանացի որ սպասում են նաւակին, քանի որ ներսում ոչինչ չունին։ Վարդապետը ամեն պատրաստութիւն սկսեց տեսնել, որ գիշերով դասաւորէ նաւակում՝ առաւօտ դրկելու համար։

Սակայն դիշերը այլ անցքեր տեղի ունեցան, որոնք հաշուի առնուած չէին և դժուար նախատեսելի։

Ոստանի Գայմագամութիւնը լրտեսների միջոցով ստոյգ տեղեկութիւն ստացել էր որ Ֆէտայիների խումբը Կիրակի օր մտել է Աղթամար կղզին։ Այդ մասին հեռագրական կապով արագ հաղորդել Վանի Գեղար. իշխանութեան, որ անմիջապէս ձիաւոր զինուած ոյժեր Վանից ճամբու էր հանել դէպի Ոստան, հրահանգելով միաժամանակ մինչեւ Կարճկան եղող նաւահանգիստները ու կայանները առնել ուժեղ հսկողութեան տակ, որ ո՛չ մէկ նաւ տեղից չշարժուի. ամեն կէտում հաստատել զինուած ձիաւոր պահակախումբեր։

Ահա նոյն Ծաղկազարդի կիրակի օր կէսօրից՝ իշխանութիւնը արագութեամբ շարժման մէջ դրած էր

հարկ եղած ոյժերը պաշարման օղակի մէջ առնելու Աղթամար կղզին։

Կիրակի լոյս երկուշաբթի, արշալոյսից շատ առաջ իմ ննջասենեակ մտաւ Դանիէլ Հայր սուրբը գիշերաշրջգեստով, յայտնեց թէ երկու սպաներ 25 ձիաւորներով մտան ներս։ Մէկը առանց հանդստանալու մի ասնակի հետ գնաց Նոր-գիւղ Մոխրաբերդ։ Սարգիսը մատնուած է և կառավարութիւնը հաստատօրէն նրա կղզում գտնուելը գիտէ։ Միակ փրկութիւնը փոքրիկ նաւակը ներս փախցնելն է. և այդ կարող են անել միայն մեր աշակերտները։ Առանց յապաղման միատեղ մտանք մեծահասակ աշակերտների ննջասենեակը, ուր իշտիակների վրայ սանները պառկած էին։ Մեր յանկարծական մուտքից համարեա բոլորը արթնացան։ Վարդապետը անմիջապէս ասաց հետեւեալը.

— Տղանե՛ր, Սարգիս իր իմբով կղզուումն է. կառավարութիւնը գիտէ այդ, իր ձիաւոր ոյժերը քիչ առաջ մտան վանքը, զբաղուած են իրենց ձիերը տեղաւորելով։ Այժմ մեր յոյսը ձեր վրայ է, ամեն վրտանգ աչք առնելով նաւակը պէտք է փախցնէք ներսի տունը։ Դուք այսօրուայ համար էք պատրաստուում, ձեզ մատաղ, շուտ նաւակը թողէք ներսը։ Ես շտապում եմ ձիաւորների մօտ, պիտի ձգձգեմ նրանց ձիերի տեղաւորումը և կերի հայթայթումը, արագ շարժուէք օգտուելով մութից և իմ ձգձգումից։ Նա հրահանգեց միաժամանակ որ նաւակը ուղիղ չթիավարեն դէպի ծովը, այլ առաջ քաշեն ափով Ուռուսու այգու կողմը, դէպի Իշկերտ գիւղը, այնտեղից նոր դուրս գան բաց ծովը. նախ դէպի Առտէրի ուղղութիւնը, ապա նոր թիավարեն դէպի Աղթամարը։ Ասաց ու իսկոյն գնաց զբաղեցնելու վանք մտած ձիաւորներին։

Այս պահուն ես ակամտես եղայ աշակերտների անվարան դէպի գործ, դէպի վտանգ նետուելու փութկոտ վճռականութեան։ Զորս հոգի, առանց տեւէ մատնանշումի, արագութեամբ հագան հագուստները։ Մէկը, որ կոչուում էր Յակոբ, ասաց. տղաներ սոլ մի հագնէք, գուլպայով գնանք որ ձայն չլինի։ Ներան հետեւեցին ուրիշ երեք հոգի՝ ինքնայօժար փութաջանութեամբ...

Խուժդուժ իջանք ցած, բացինք դպրոցական շէնքի դէպի ծով նայող մեծ դուռը։

Զորս պատանիները անցան ծովափը։ Նաւակը, որ քաշուած էր ափի աւազի վրայ, հրեցին զգուշ ջրի մէջ ու նոյն զգուշութեամբ քաշեցին վարդապետի մատնանշած ուղղութեամբ, կորան մեր տեսողութիւնից ադամաց մթութեան մէջ։

Մենք շունչերնիս պահած դուռը կամաց փակեցինք և բարձրանալով վերնայարկ սկսեցինք լուսամուտից դիտել. հազիւ կէս ժամ անցած լուսաբաց էր, երբ սկսուեց հրացանների կրակոցը։ Կաթողիկոսարանի բարձր կտուրին հսկող պահակը նկատել էր ծովու բաց լողացող նաւակը, իմաց տուել ըստպային, որն իր կարգին հրամայել էր կրակել դէպի վզզին յառաջացող մակոյկի վրան։

Մենք մեր հոգու մէջ բուռն երջանկութեան յուզումի մի պահ ունեցանք։ Մեր տղաները անվախ խիզախութեամբ թոցրին ազատարար նաւակը և ահա անընդատակ կրակոցների տակ քաջի պէս թիավարում են հեռո՛ւ ծովի բացերը, հրացանի գնդակի հասողութեան սահմանից դուրս։

Մենք չգիտենք յետ այնու ի՞նչ կատարուեց կաթողիկոսարանի յարկաբաժնում, միայն իմացանք որ վնասուում էին Դանիել վարդապետին։ Ոստիկանները

եկան դպրոց էլ նրան փնտռելու. սակայն իզուր։ Վարդապետը մի յարմար պահին փախել էր Ախավանքի ծառաստաններին միջով, հեռացել անյայտ ուղղութեամբ (*)։

Թէ նաւակի փախցնելը, թէ Դանիէլ վարդապետի ճարպիկ փախուստը չփոթութեան էր մատնել հրամանատար սպային ու զինուորներին։

Մեզ ազդարարուեցաւ դպրոցի շէնքից դուրս չըգալ։ Դրան կանգնեցուցին զինուած պահակներ։ Այս դրութեան մէջ մնացինք մի քանի օր, մինչեւ որ կզզու պաշարումը վերացաւ...

Դանիէլ հայր սուրբի հեռանալուց յետոյ կառավարութիւնը տեղապահ Յովսէփ եպիսկոպոսին ու միաբանութեան անդամ Եզնիկ վարդապետին տարան Ոստան և կարգադրեցին ապրիլ Զարահան վանքում ընդ հսկողութեամբ զինուորական իշխանութեան։ Գուցից յետոյ երկուսն էլ վերադարձան Աղթամար, ու ոչէ պատասխանատուութեան չենթարկուեցան։

---

*) Այս պատահարի հետեւանքով Դանիել վարդապետը դարձաւ փախստական։ Մի քանի ժամանակ Վանում իբրեւ փախստական ապրելով մեր նոյն վինակ ունեցող ընկերների հետ, Կ. Կոմիտէն նրան ուղարկեց պարսկաստան։ Արտաղի Թադէոս առաքելի վանքում վարեց վանահոր պարտականութիւն։ Օգնեց այդ բանուկ յեղափոխական գծով զինական փոխադրութեան աշխատանքին։ 1908 թ. սահմանադրութիւնից յետոյ վերադարձաւ Աղթամար իր պարտականութեան։

Դանիել Վրդ. Զատոյեան

ԾՈՎԱՊԱՇԱՐՈՒՄԻ ԵՒ ԿՈՒԻ ԵՐԵՔ ՕՐԵՐԸ

Մեր չորս անձնազոհ պատանիները՝ Յակոբ Գուլոյեան, Տիգրան Մազմուզեան, Տիգրան Շահպազ և Արշաւիր (ազգանուն չեմ յիշեր) նաւակը ներս-կղզին հասցնելով պատմում են Սարգսին իրենց մատնուելը և պաշարման ենթարկուելը։ Ինչպէս յետոյ իմացայ,

խումբը որոշում է սպասել գուցէ մի նաւահանգստից մի նաւ հասնի կղզին իրենց օգնութեան, մեր ընկերների դուրսի ջանքերով։ Այդ չիրականանալու պարագային նոր միայն փորձեն փոքր նաւակով հեռանալ կղզուց զինուած խմբով միասին, առանց պատանիները հետերնին վերցնելու. որովհետեւ մակոյկը այնքան փոքր էր որ նոյնիսկ շատ դժուարութեամբ կը վերցնէր եօթը զինուածները իրենց զինական միջոցներով։ Սա մի դժուարին ընտրութիւն էր որ պիտի կատարուէր՝ աղէտների մէջ փոքրագոյնի ընտրութեան ապաւինելով, երբ ուրիշ ելք անհնար էր։

ԱԻԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Այդ օրը Վանի Աւանց նաւահանգստից դէպի Աղթամար առաջացան ութ առագաստանաւեր, որոնցից հինգը մնացին ծովու բացերում շրջադայելով կղզին հիւսիս արեւմուտքից, երեքը եկան խարսխեցին Ռատանայ կապանի և կղզու միջեւ գտնուող Մանահճիր հրուանդանի խորշում, որ ցամաքամասի ամենամօտիկ կէտն է Աղթամարից։ Նաւային այս պաշարողական շարժումը վարում էր Վանի նահանգի զինուորական իշխանութիւնը, որ ճամբայ հանած առագաստանաւերի մէջ տեղաւորած էր փոքրաքանակ զինուորներ իրենց պատրաստութեամբ, պարենով եւայլն։ Նոյն օրը Մոխրաբերդ հայ գիւղի նաւահանգիստը և այնտեղ գտնուող նաւերն ու նաւակները, ենթարկուեցան հսկողութեան, վերցուեցան նաւերի բոլոր զեկերը։ Ինչպէս Աղթամարայ 1904 թ. առաջին կռուի միջոցին, երբ Սասունից նահանջող հայդուկային մի զօրաւոր ու ատուար խումբ Անդրանիկի զեկավարութեամբ

Դատաւանից ապաստանեց կղզին, կառավարութիւնը իւր զինուորական գործողութեանց համար խարիսխ ընտրեցց Ռշտունիքի Մանահճիր հրուանդանը գրաւելու կղզին, ահա այս անգամ եւս նոյն վայրում համախմբեց իր կանոնաւոր զինական ոյժերը, լեռնային թնդանօթներով միասին։

Այս պատրաստութեամբ նոյն օրը, վերջալոյսից բաւական առաջ, առաջին փորձ կատարեց երեք նաւերը, զինուորներով մօտենալու կղզուն։ Այս առաջին փորձը ցոյց տուաւ որ յիրաւի ֆէտայական խումբ կայ կղզու վրայ։ Քանի որ առաջացող նաւերը, երբ որոշ հեռաւորութեան վրայ մօտենում էին Աղթամարին, նրանի կողմից լսուեցան հրացանային կրակոցներ ֆէտայիների կողմից։ Անմիջապէս առագաստանաւերը սկսեցին յետ վերադառնալ իրենց կայանը, առանց լուրջ կռուի բռնուելու։ Մենք այս բոլորը դիտում էինք դպրոցի վերի յարկի լուսամուտից երկարակող դիտակի միջոցով, առանց նկատելի դարձնելու մեզ։ Այդ դիշերը անցուցինք խոր մտահոգութեանց մէջ, համարեա արթուն, ականջի և ուշադրութեան լարուածութեամբ դէպի դրսի ամեն ձայն կամ շշուկը։

ԱՒԱԳ ԵՐԵԿՇԱԲԹԻ

Այս օրը սկսեց լուրջ կռիւ։ Նաւերի վրայ պատրաստել էին աւազով լեցուած պարկերից պատնէշներ, որոց հետեւը դիրք էին մտել կանոնաւոր զինուորները։ Լեռնային երկու թնդանօթներն էլ զետեղած էին նաւերի մէջ։ Ապայական կազմի ղեկավարութեամբ նաւերը առաջանալ սկսեցին, կէս առագաստները պարզած, որոշ հեռաւորութիւնից սկսեցին գործել լեռնային հրանօթները, որոց գնդակները երբեմն հասնում

էին կղզուն, այնտեղ պայթում, բարձրացնելով փոշու և ծուխի ամպ, որ պարզ նկատում էինք։ Թնդանօթների որոտի հետ լսելի էին բաւական բուռն հրացանային կրակոցներ, անշուշտ երկու կողմերից փոխադարձող։ Կրակոցները և ռումբի որոտները մերթ ուժեղանում էին, մերթ թուլանում, դադրում։

Թուրք դինուորական ղեկավարութիւնը սպասում էր որ ամենազօր Թնդանօթի գնդակների պայթումով պիտի բնաջնջուէին ներսում կռուող փոքրաթիւ ֆէտայիները, այդ կերպ իրենք պիտի յաջողէին մտնել կղզին։ Զո՞ւր յոյսեր և ջանքեր, որովհետեւ ներսինները իրենց դիպուկ նշանառութեամբ անկարելի կը կացուցանէին առագաստաւոր նաւերին շատ մօտենալ կղզուն։ Այլ ձեւով նաւերը ենթակայ պիտի լինէին ջրամոյն լինելու վտանգին, չունենալով ծակող գնդակներից պաշտպանուելու միջոցներ։

Կռուի այս արարուածը տեւեց մի քանի ժամ, որի ընթացքին նաւերը հնարաւորութիւն չունեցան մօտիկ մերձենալու կղզու ափերին։ Նախատեսուած ոմբռածութիւնը չտուաւ սպասուած արդիւնքը. հայ ֆէտայու մօտին հրացանի գնդակը ազդարար նշան էր թուրքերին, որ կղզու ափին հասած անդամ կարող են ծովամոյն լինել ու անհնար է կղզին բարձրանալը։ Եղած միջոցները չէին ծառայում կղզին գրաւելու նպատակին կամ ջնջելու հայ մարտիկներին։

Սկսուած նաւարշաւը ձախողանք եղաւ այդ օրը. դինամիտերի սպառումից բացի, մարդկային կորուստ չունենալով դանդաղօրէն նաւերը յետ վերադարձան իրենց կայանը և Մանահճիր լեղուակի առաջ խարսխեցին։ Այս եւս պիտի ասենք, որ կղզու մէջ կռուող մեր ֆէտայի տղայք նաւերը գնդակով վնասելու և ասքեարների խփելու մտադրութեամբ նշանառութիւն

չէին անում, այլ միայն աղդարար կրակոցով հասկացնում, որ աւելի չփորձեն մօտենալ կղզուն, այլապէս ֆէդայու գնդակին մատաղ պիտի դառնային անվրէպ։

ԱՒԱԳ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ

Նոյն կռուի փորձը, մի աստիճան աւելի խիստ հրացանաձգութեամբ ու սաստկացած ռմբակոծութեամբ կատարուեցաւ Զորեքշաբթի կէսօրին։ Դրական ու չոշափելի արդիւնք չունեցաւ թուրք զինուորական հրամանատարութիւնը. և թւում էր թէ նա ուզում էր այս ձեւի պաշարումով և կռուի շարունակականութեամբ ահաբեկման ու սովամահութեան ենթարկել ֆէտայիներին, նրանց մղելու որ անձնատուր լինին։

Նոյն օրը առաջին մութը բռնելուն պէս, խումբը կը գործադրէ իր որոշումը. այլեւս զուր էր սպասել օգնութեան եկող նաւի, պէտք էր թողուլ կղզին, իրենց աղաւ դուրս գալու բախտը կապելով չորս անձնազոհ պատանիների բերած փրկարար մակոյկին, թէեւ տարողութեամբ գրեթէ անբաւարար, վերցնելու հօթ հայդուկներն՝ իրենց զէնքերի ծանրութեամբ միասին։

Ուրիշ ճար և միջոց գոյութիւն չունէր։

Երկար յամեցումը կարող էր անցանկալի բարդութիւնների և վտանգաւոր անակնկալների առաջ դնել գաւառաբնակ մերազնէից կեանքի ապահովութիւնը։

Գիշերային մթութեան մէջ Սարգիսը և իր զինակիցները ողջագուրանքով, ծանր, շատ ծանր ապրումով բաժանւում են կղզու բնակիչներից, յատկապէս ծերունի Հայր Պօղոսից և չորս պատանիներից։

— Բարով խէրով դուք ազատուէք այս շառից,

— ասել էր Հայր-Պողոսը — մեր բանը խէր է, Աստուած մեզ պահեց Անդրանիկի կռուից (ակնարկը 1904-ի Աղթամարի ա. կռիւն է), էս անգամն էլ Տէրը մեզ կը փրկէ։

— Մենք ուրախ ենք լինելու, երբ բոլորդ ապրատուէք։ Յեղափոխական գէղայու պատիւը թող փրկուի, մենք մեր արածը արինք — ասել էր պատանիներից Յակոբը։

Օգտուելով գիշերային թանձր խաւարից, խումբը նաւակի թիերը շարժելով յառաջանում է Առտէր կղզու ուղղութեամբ դէպի բաց ծովը, ապա թեքւում Կրմրակ աւերակ վանքի ծովափը, որ գտնւում էր Մոխրարերդի և Գանձակ-Վառենց գիւղերի միջեւ։ Անվտանգ, առանց արգելքի անցնում են նաւապաշարման գծից։ Դուրս գալով ծովափը, նաւակի յատակին բանում անցք, մի քանի մեծ քարեր տեղաւորելով մէջը, սուզւում է նաւակը ջրի յատակը, այսպէս հետքը կորսւում։ Խումբը այնտեղից բարձրանում է Գլուշական անունով լեռնագագաթին, այնտեղից դիտակներով հետեւում թէ ինչպէս զինուորները նաւերով պիտի մըտնէին կղզին։

ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԿՂԶԻՆ, ՊԱՏԱՆԻ ՅԱԿՈԲԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ օրը, աւագ հինգշաբթի, Հայր Պողոսը կղզու վրայ երկու տեղ բարձր ձողի ծայրին պարզում է ճերմակ դրօշակ, որն անշուշտ աննկատ չէր կարող մնալ մերձակայ ծովափից զինուորկ. գործողութիւններ վարող սպաների ուշադրութիւնից։

Որոշուած ժամին Մանահճերի ծովափից շարժւում

են նաւակները դէպի Աղթամար, առանց կրակ բանալու։ Առաջին նաւը կարգադրութիւն է ստանում յառաջանալով աւելի մօտենալ կղզուն. պարզ երեւում են ճերմակ դրօշակները։ Նաւին թուրք ասքեարները բաց են անում մի քանի համազարկեր, փոխադարձում չտեսնելով, առաջին նաւը մտնում նաւահանգիստ, միւսները հետեւում նրան հեռուից՝ կռուի պատրաստ վիճակում։ Կղզին դուրս եկած սպան և զինուորները սկսում են աջ ձախ հրացան արձակել ու բարձրանալով մօտենալ վանքի ու միաբանութեան շէնքին։ Այս չփոթ վիճակն ստեղծուած պահուն վանքի սպասաւորներից յայտնի Եզովբոս սարսափի մատնուած տնտեսը նից դուրս վազում ցած ծովեզերքը, աննորմալ շարժումներով ու իրեն նետում, ծովի մէջ լողալով, հանդիպակաց նաւերը։ Զորս պատանիներից Խիչանցի Յակոբ Գուլոյեանը, որն ամենից կրտսերն էր, ինքն էլ անգիտակցական մղումով կը հետեւի Եզովբոսի օրինակին, ծով կը նետէ ինքզինքը։ Ահա այս պարագային ծովու վրայ եղող զինուորները կրակ կը բանան երկու ապաբախտների վրայ, առաջին իսկ գընդակից կ՚ըսպաննուի պատանի Յակոբը, իսկ Եզովբոսը կը մնայ անվտանգ, փրկուելով ստոյգ մահից։

Պատանու սպանութիւնը ուժգին կ՚ազդէ Պօղոս վարդապետի վրայ. այս ալեւոր վանականը ինքնիրմէ հեշած կը յառաջանայ դէպի զինուորները և սպան՝ գոչելով.

— Ես եմ վանքի տէր և պատասխանատուն, ինչ գործ ունիք այս մանուկների հետ, որոնք ահուսարսափի մատնուած ձեր կրակոցից փախան ընկան ծովը։ Ցէդայի չկայ, մարդ չկայ, վարուեցէք ինձ հետ ինչպէս կ՚ուզէք, անմեղներին մի խփէք, մի սպաննէք. կրակելու կարիք կ՚ չկայ...

Ալեւոր վարդապետի այս խիզախութիւնը, թեբեւս տարիքը և սքեմը, կ'ազդէ սպայի վրայ, որ կը հրամայէ կրակը դադրեցնել։

Հայր Պօղոսը կ'առնուի հսկողութեան տակ, վանքի ծառայողներին, նրանց հետ նաեւ նաւակ փախցընող մեր պատանիներին կը համախմբեն երկու սենեակի մէջ, պահակների հսկողութեան տակ։

Շուտով կղզին կ'ինկնեն միւս նաւերից զինուորներ, սպաներ և աւելի քարձրաստիճան մի զինուորական հաղարապետ, որի ցուցմունքով մանրամասն խուզարկութեան կ'ենթարկեն բոլոր շէնքերը, խուցերը, մառանները, ապա յետ այնու կղզու զանազան մասերը։ Ի վերջոյ Ս. Խաչ վանքը, ընկերակցութեամբ Պօղոս վարդապետին։

ՀԱՅՐ-ՊՕՂՈՍԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Աղթամարի սոյն կռուից յետոյ, մի անգամ երբ Հայր Պօղոսը գտնուում էր Ախավանքում, զրոյց ունեցայ իր հետ կղզում կատարուած անցուդարձերի շուրջ։ Նա պատմեց թէ ինչպէս իրեն ենթարկեցին քննութեան և ինքը ինչպէս պատասխաններ տուած է քննիչ սպային, առաջին օրն իսկ։

ՀԱՐՑ.— Ի՞նչ եղան ֆէտայիները. Գարապաչ էֆ.

ՊԱՏ.— Գացին, ինչպէս որ եկել էին։

Հ.— Քանի՞ հոգի էին։

Պ.— Վեց կամ եօթը հոգի էին։

Հ.— Ճիշդ չես ասում, աւելի շատ լինելու են։

Պ.— Բոլորովին ճիշդ եմ ասում, հարցրէք վանքի մեր պառաւներին էլ։

Հ.— Անունները ի՞նչ էին։ Գլխաւորին ի՞նչ անուն էին տալիս։

Պ.— Ոչ մէկի անունը չգիտեմ։ Գլխաւոր չկար, բոլորն էլ մէկ էին։

Հ.— Ո՞րտեղացի էին։

Պ.— Աստուած գիտէ։

Հ.— Ի՞նչ տեսակ զէնքեր ունէին։

Պ.— Պէյ իմ, ես զէնքի մասին գաղափար չունիմ, վարդապետ մարդ եմ։

Հ.— Պօմպա կա՞ր հետերնին։

Պ.— Կեանքիս մէջ պօմպա տեսած չունիմ։

Հ.— Ե՞րբ եկան կղզին, և ինչո՞ւ տեղ տուիք։

Պ.— Մի գիշեր ժամանակ էր, երբ եկան վանքը և բոլորին բանտարկեցին մի տեղ, թոյլ չէին տալիս դուրս գալ։ Տեղ չտալը մեր ձեռքին չէր, եթէ պետութիւնը սահմանից թոյլ է տուել էս հողը մտնեն, էս տեղ էլ կըգան, ամեն տեղ էլ կ՝երթան։

Հ.— Ինչո՞ւ համար եկել էին կղզին։

Պ.— Մի բան չեմ իմանում, որ կարողանամ ասել։

Հ.— Ուրիշ ժամանակներն էլ ֆէտայիները եկե՞լ են կղզին։

Պ.— Առաջին անգամ լինելով. ֆէտայի նոր տեսայ։

Հ.— Ո՞ր կողմ գնացին։

Պ.— Նրանց գնալը մենք չիմացանք։

Հ.— Կղզում թաքստոց, պահեստ կա՞։

Պ.— Այդ տեսակ գաղտնի տեղեր չկան կղզում, եթէ չէք հաւատում՝ ձեր ձեռքն է, ինչքան կ՝ուզէք խուզարկեցէք։

Նոյն ձեւի հարցաքննութեան ենթարկել էին Յովսէփ եպ. Ռշտունունն, (որ 80 տարեկանի մօտ հասա-



ԳԱԳԻԿԱՇԷՆ ՎԱՆՔՆ ԱՂԹԱՄԱՐԱՑ

(Նկարի աջակողմը, նշենու ճիշտ տակը, հանգչում է պատանի Յակոբը)

կումն էր), ապա Եղնիկ վարդապետ Ներկարարեանին։ Յովսէփ եպ. շատ կտրուկ կերպով հրաժարուել էր հարցաքննութեան ենթարկուել, ասելով որ ինքը ոչ-ինչով ծանօթութիւն և տեղեկութիւն չունի և զուր տեղ նեղութիւն չպատճառեն իրեն։ Իսկ Եղնիկ Հայր սուրբը մտածուած պատասխաններով ընդառաջել էր հարցաքննութեան, միշտ պնդելով որ թէ՛ կաթողիկոսարանը, թէ՛ վանքը Օսմ. կառավարութեան հանդէպ հաւատարիմ դերի մէջ են։ Կատարուածները իրենց կամեցողութենից դուրս են։

Զինուորական ոյժերը երեք օր Աղթամարում մընալուց յետոյ ամբողջովին պարպեցին և հեռացան։ Մեր դպրանոցը ունեցաւ պատանի վառվռուն Յակոբի կորուստը, որ մինչեւ այժմ էլ յիշում եմ, ինչպէս երէկ...

Կրկնազատկի կիրակի օրը ուսուցչական խումբով իր դասարանի աշակերտների հետ այցի գնացինք Աղթամար կղզու նշենու ստուերախիտ ծառի հովանու ներքոյ հանգչող անձնազոհ Յակոբի թարմ հողակոյտին, որի վրայից քառասուն երկու տարիներ անց՝ այսօր էլ շոյելով անցնում են Վանայ ծովու և Ռշտունեաց աշխարհի հովերը։

Հայրենի կղզու գրկում հանգչող պատանի մարտիրոս, պատի՛ւ քո հերոսութեան, պատի՛ւ քո յիշատակին։

Թէհրան 1949

ՌՇՏՈՒՆԻՔ ԿԱՄ ԳԱՒԱՌ

Գծագրեց՝ Հ. ԿՈՍՈՅԵԱՆ



ԳԻՆ՝ 75 Լ. Դ.

Հասցէ՝

Doct. A. KABAKIAN
Rue Georges Picot, Imm. Tolah
Beyrouth, (Liban)